ՆԱԽԱԳԻԾ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում «50» թիվը փոխարինել «20» թվով, իսկ «գումարի չափով» բառերը՝ «40 տոկոսի չափով» բառերով:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ քսան օրվա ընթացքում, Օրենքի 7-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված՝ հանրակրթական դպրոցների, պրոֆտեխնիկական ուսումնարանների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերում տեղակայված հանրային սննդի գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել հայտարարություն՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ:

3. Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերության դրույթները կիրառվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված խախտումների մասով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ.
ՍԱՀԱԿՅԱՆ